ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 797 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 677-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Բարեգործության մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետը՝

1. Սահմանել, որ Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղի կողմից (ՀՎՀՀ՝ 00032803) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության փոխվարչապետի 2024 թվականի սեպտեմբերի 25-ի «Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղի կողմից իրականացվող «Բարեկեցիկ ապագա» ծրագրի մասին» N 677-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Շինսերտիֆիկատ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01528652) 2024 թվականի հոկտեմբերի 8-ին կնքված՝ N 260/24 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Երևանի Բաղրամյան 18 հասցեում առկա մուտքային հանգույցների սեյսմիկ հետազոտության արդյունքով եզրակացության տրամադրման աշխատանք-ների իրականացում՝ 550,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Շինսերտիֆիկատ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01528652) 2024 թվականի հոկտեմբերի 8-ին կնքված՝ N 261/24 պայմանագրում նշված գործարքը, որով

նախատեսվում է Երևանի Բաղրամյան 18 հասցեում մուտքային հանգույցների շինարարական աշխատանքների տեխնիկական հսկողության և մետաղի ու բետոնի փորձարկման արդյունքում եզրակացության տրամադրման աշխատանքների իրականացում՝ 1,300,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Երևան

11.11.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ